

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2016թ. սեպտեմբերի 13-ի

նիստի /արձանագրություն N 1/

1. ԵԹԿՊԻ-ի հեռակա ուսուցման 2016-2017 ուս. տարվա ընդունելության գործընթացի աշխատանքները համարել բավարար,
 - 1.1. հանձնարարել հասարակայնության և տեղեկատվության հետ կապերի պատասխանատու Է. Բարսեղյանին կազմակերպել նախապատրաստական դասընթացների և հեռակա ուսուցման բաժնի 2016-2017 ուս. տարվա ընդունելության գովազդի տարածումը կայքերում,
 - 1.2. հաստատել բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման համակարգի ներքոհիշյալ մասնագիտական կուրսերի ղեկավարների թեկնածությունները՝
 - 1.2.1. Ռեժիսուրա – Պետրոսյան Իոսիֆ
 - 1.2.2. Կինոարվեստ – Գևորգյանց Վահե
 - 1.2.3. Օպերատորություն – Բաբասյան Սամվել
 - 1.2.4. Պարարվեստի ռեժիսուրա – Պիպոյան Ռիմա
 - 1.2.5. Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում – Միրզախանյան Շուշան
 - 1.2.6. Թատերագիտություն – Օրդոյան Գրիգոր
 - 1.2.7. Կինոգիտություն – Գալստյան Սիրանուշ
 - 1.2.8. Սցենարադրամատուրգիական արվեստ – Խոդիկյան Կարինե
2. Հանձնարարել ֆակուլտետների ղեկաններին կազմել և ներկայացնել մասնաճյուղերում վարպետաց դասեր անցկացնելու ժամանակացույցը,
 - 2.1. հանձնարարել կադրերի հաշվառման բաժնին ըստ ներկայացված ժամանակացույցի մասնաճյուղերում վարպետության դասեր անցկացնող դասախոսների համար սահմանված կարգով ձևակերպել գործուղումներ:
3. «ԵՍ ԵՍ» միջազգային երիտասարդական կինոփառատոնի համար որպես խրախուսման ձև սահմանել դիպլոմ և նվիրել ինստիտուտի բեմանկարիչ-շրջանավարտի մեկ աշխատանք:

4. Հանձնարարել ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումներին մինչև սեպտեմբերի 25-ը պատրաստել ՈԱԿ-ից ստացված գործողությունների ուղեցույցը:

5. ՀՀ անկախության 25-ամյակի տոնակատարության կապակցությամբ՝

5.1. հանձնարարել պրոռեկտոր Հ. Ավագյանին կազմակերպել շնորհավորական պաստառի պատրաստման, գեղարվեստական ձևավորման աշխատանքները,

5.2. ՀՀ անկախության 25-ամյակին նվիրված համերգ-մրցույթը կազմակերպելու համար նախագծի կազմակերպիչ Աշոտ Պողոսյանին հատկացնել 50.000 (հիսուն հազար) դրամ:

6. Հանձնարարել պրոռեկտոր Վ. Եղիազարյանին և գլխավոր հաշվապահ

Հ. Նալբանդյանին շուտափույթ կազմել և ՀՀ հարկային տեսչություն ներկայացնել պատասխան նամակ՝ մանրամասն շարադրելով և մեկնաբանելով ներկայացված մեղադրանքի անճշտությունը,

6.1. հանձնարարել պրոռեկտոր Վ. Եղիազարյանին և գլխավոր հաշվապահ Հ.

Նալբանդյանին հետագա թյուրիմացություններից խուսափելու համար այսուհետ ուշադիր և հետևողական լինել ՀՀ հարկային տեսչության հետ իրականացվող գործողությունների նկատմամբ,

6.2. հանձնարարել պրոռեկտոր Հ. Ավագյանին իրավախորհրդատուի հետ

միասին նախաձեռնել ինստիտուտին կից «Շրջանավարտ» հիմնադրամի նախապատրաստման աշխատանքները և մինչև տարեվերջ ավարտել իրավաբանական ձևակերպումները,

6.3. թույլատրել գլխավոր հաշվապահ Հ. Նալբանդյանին Թատրոնի ֆակուլտետի դեկան Էլմիաննա Հեքեքյանին՝ Լեհաստան մեկնելու համար հատկացնել անհաշիվ գումար,

6.4. հանձնարարել կինոֆակուլտետի դեկան Ա. Երզնկյանին և պրոռեկտոր Վ.

Եղիազարյանին նախապատրաստել կինոռեժիսոր Կարեն Շահնազարովի այցը և վարպետության դասերի անցկացումը,

6.5. ինստիտուտի հաստիքների օպտիմալացման նպատակով ս.թ. սեպտեմբերի

1-ից կրճատել Ուսումնական թատրոն-լաբորատորիայի գեղարվեստական ղեկավարի հաստիքը,

6.6. հավանություն տալ գիտական խորհրդի կազմում ընդգրկված ուսանողների անվանացանկում ուսխորհրդի կողմից առաջարկվող մասնակի փոփոխություններին,

6.6.1. հանձնարարել կադրերի հաշվառման բաժնին հրամանագրել ուսխորհրդի նախագահի զեկուցագրով առաջարկվող փոփոխությունները:

6.7. Երաժշտության հիմունքներ առարկան Արվեստի պատմության և տեսության ամբիոնի առարկայացանկից Մեներգի և բեմական շարժման ամբիոնի առարկայացանկ տեղափոխելու հարցը քննարկել ինստիտուտի մեթոդխորհրդում և տալ համապատասխան եզրակացություն:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան